



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ  
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

25 01  
«-----» ----- 2013թ.

2  
Թիվ -----


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ  
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ  
ԼՐԱՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասով, „Քաղաքաշինության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14<sup>3</sup> հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը /այսուհետ՝ գլխավոր հատակագիծ/ համաձայն հավելվածի:
2. Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառական նշանակությունները համարել փոփոխված՝ „Քաղաքաշինության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14<sup>3</sup> հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի „Կառուցապատման համար նախատեսված տարածքների բաշխումն ըստ նպատակային նշանակության փոփոխությունների,, գծագրին /այսուհետ՝ գծագիր/ և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում.

Ինդեքսը գծագրի վրա	Առկա նպատակային նշանակությունը	Տարածքի մակերեսը /հա/	Գլխավոր հատակագծում փոփոխված և նպատակային նշանակությունը մակարեսը /հա/	Տարածքի մակերեսը /հա/
1	2	3	4	5
1	արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	1.0397	բնակավայրի	1.0397



1	2	3	4	5
ԱԴ-1	արտադրական	0.4108	խառը կառուցապատման	0.4108
ԱԴ-2	արտադրական	0.6289	խառը կառուցապատման	0.6289
ընդամենը				1.0397
2 ՀՆ-1	հատուկ նշանակության հողեր	0.1162	անհատական բնակելի կառուցապատման	0.1162
ընդամենը				0.1162

3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և „Քաղաքաշինության մասին, Հայաստանի Հանրապետության օրենքի 14<sup>3</sup> և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Բենիամինյան Կարեն  
Դերմոյան Արման  
Կիրակոսյան Գրիգոր  
Մնացականյան Հարություն  
Նազարյան Գոռ  
Վարդանյան Ռազմիկ

Գալստյան Արթուր  
Թադևոսյան Արման  
Հայրապետյան Ռուզան  
Հովհաննիսյան Վազգեն  
Վարդազարյան Վաչագան

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ Ժ/Պ՝

*(Handwritten signature)*

Ա.ՇԻՐԱՅԱՆ

